Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի ֆինանսական
դիտարկումների կենտրոն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ. (+37410) 54 50 88
Էլ. փոստ՝ info_fiu@cba.am

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության ակադեմիա
ք.Երևան, Փիրումյանների 9
Հեռ. (+37460) 46 00 87

Էլ. փոստ՝ info@justiceacademy.am

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան «12» 11 2016թ.

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1141-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) և, մասնավորապես Որոշման 2-րդ հավելվածի 50-րդ կետը.

Նկատի ունենալով, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցելու ցանկությունը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս Ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանի, մի կողմից և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ՝ ՖԴԿ), ի դեմս ՖԴԿ-ի ղեկավար Դանիել Ազատյանի (այսուհետ միասին՝ Կողմեր), մյուս կողմից, կնքեցին սույն փոխըմբռնման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):

1. Համաձայնագրի նպատակները

1.1. Համաձայնագրի նպատակն է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում ընդգրկված՝ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների մասնագիտական պատրաստվածության կատարելագործումը:

2. Համագործակցության առարկան

2.1. Կողմերը համաձայնում են՝

2.1.1. համագործակցել Ակադեմիայի ուսումնական ծրագրերում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային-իրավական փաստաթղթերի և ներպետական օրենսդրության վերաբերյալ դասընթացների առարկայական ծրագրերի[1] կազմման, մասնավորապես՝ այդ ծրագրերում փոխադարձ համաձայնեցված թեմաները ներառելու և համապատասխան նյութերի մշակման ուղղությամբ.

2.1.2. համագործակցել Ակադեմիայի կողմից հեռաուսուցման դասընթացների մշակման և կազմակերպման ուղղությամբ.

2.1.3. կազմակերպել համատեղ դասընթացներ, գիտական միջոցառումներ (համատեղ քննարկումներ (կլոր սեղաններ), գիտաժողովներ, սեմինարներ և այլն).

2.1.4. իրականացնել համատեղ հետազոտություններ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում.

2.1.5. իրականացնել Ակադեմիայի և ՖԴԿ-ի միջև համաձայնեցված այլ միջոցառումներ:

3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.2. Համաձայնագրում Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են փոփոխություններ կատարել, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Այդ արձանագրություններն ուժի մեջ կմտնեն Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրման պահից և կկազմեն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.3. Համաձայնագրի կատարմանն առնչվող հաղորդակցությունն իրականացվում է Կողմերի՝ Համաձայնագրում նշված կոնտակտային տվյալների հիման վրա:

3.4. Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Համաձայնագրի

---

[1] Առարկայական ծրագրերում արտացոլվում են քննարկման ենթակա իրավական հարցերը, գրականությունը և այլն:

գործողությունը դադարեցնել ցանկացող կողմը պարտավոր է մյուս կողմից այդ մասին գրավոր տեղեկացնել առնվազն մեկ ամիս առաջ: Այդ դեպքում կողմերը պարտավորվում են ավարտին հասցնել մինչև Համաձայնագրի դադարեցումը չավարտված ծրագրերը:

3.5. Համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի ռեկտոր	**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավար**
Սերգեյ Առաքելյան	**Դանիել Ազատյան**
L.S.	L.S.